



ԵՐԵՎԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՊՈՐՏԻՎ ԵՎ ԿՐԹԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

# ՈՒՂԵՑՈՒՑՑ

2018

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՔԱՂԱՔՆԵՐԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՄԻՆԻՑՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՆԻ ԿՐԹԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՃԱՏԱՐԱՌԵՏԱՇԽԱՐԱԿԱՆ ՆԱԽԳԻԾ

մշակելու, հաստատելու ու համաձայնեցնելու և  
ՇԽԱՐԽՈՒԹՅԱՆ

(ներառյալ ՔԱՂԱՄԱՆ ԿԱՄ ԱՊԱՄՆԱՍԺԱՄԱՆ)  
ԹՄՅՆԵՐԿԱՆ

տրամադրելու ընթացակարգ (փուլ)

# Ց Ա Ն Կ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԿՈՂ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

h/h	Գործող ընթացակարգերի շրջանակում կառուցապատողներին տրվող քաղաքաշինական փաստաթղթի անվանումը	Կառուցապատվող օբյեկտի համար տրվող փաստաթղթերի ժամկետներ (օր), այդ թվում՝					
		Ցածր միակայանության օբյեկտներ (I կատեգորիա)	Միջին միակայանության օբյեկտներ (II կատեգորիա)	Միջին բարձր միակայանության օբյեկտներ (III կատեգորիա)	Բարձր միակայանության օբյեկտներ (IV կատեգորիա)	Բարձրագույն միակայանության օբյեկտներ (V կատեգորիա)	
1.	Նախագծման թույլտվության (Ճարտարապետահատակագծային առաջադրանքի) տրամադրում, այդ թվում՝	Որևէ քաղաքաշինական փաստաթուղթ չի պահանջվում	10	15	20	20	
1.1	<u>Տեխնիկական պայմանի տրամադրում</u> (համապատասխան մատակարար կազմակերպությունների դիմելու գործառնայթղ վերապահված է Երևանի քաղաքապետարանին)		5	10	15	15	
2.	Նախքան համաձայնեցման ներկայացնելը կառուցապատողի կողմից նախագծի համար պահանջվող քաղաքաշինական փորձաքննության ձեռք բերում		Նախագծողի երաշխավորագիր	Պարզ փորձաքննություն	Պետական համալիր փորձաքննություն	Հատուկ համալիր փորձաքննություն	
3.	Շինարարության (և/կամ քանդման) թույլտվության տրամադրում և միաժամանակ նախագծի համաձայնեցում		5	10	15	15	
4.	Ավարտական ակտի (Շահագործման թույլտվության) ձևակերպում (4.1+ 4.2), այդ թվում՝		8	8	10	10	
4.1	<u>Համապատասխան դիմումի հիման վրա՝ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովում ներկայացուցչի թեկնածության առաջադրում</u>		5	5	5	5	
4.2	<u>Ընդունող հանձնաժողովի միջոցով կառուցապատողի կողմից օբյեկտը շահագործման ընդունելուց հետո համապատասխան դիմումի հիման վրա ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպում</u>		3	3	5	5	
ԱՄԲՈՂՋ ԳՈՐԾՆԵԹԱՅԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ /1+3+4/ ՕՐԵՐՈՎ			—	23	33	45	45



Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման ընթացակարգերը, ժամկետները և դրանց հետ փոխկապակցված գործառույթներն ունեն որոշակի տարբերություն՝ կախված կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանից:

Շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հետևյալ կատեգորիաների:

### I կատեգորիա ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ (շինարարության թույլտվություն չպահանջող)



Ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների:

### II կատեգորիա միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտներ



Միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում այն փոքրածավալ շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը փոխարինվում է նախագծող կազմակերպության երաշխավորագրով, իսկ շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ շինարարական կազմակերպության երաշխավորագրով:

### III կատեգորիա միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ

Միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում II և IV կատեգորիաների ռիսկայնության օբյեկտների միջակայքում բնութագրող ցուցանիշներ ունեցող օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պարզ փորձաքննության:

### IV կատեգորիա բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ



Բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության՝ ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունները կամ մասնագիտական եզրակացությունները:

### V կատեգորիա բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտներ

Բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության) օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են հատուկ համալիր փորձաքննության և որոնց կառուցապատման թույլտվությունների տրամադրման պայմանները և ժամկետները յուրաքանչյուր առանձին դեպքի համար սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ:

### Ծ Ա Ն Ո Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յուրաքանչյուր ռիսկայնության աստիճանի օբյեկտների ու դրանց բնութագրի մասին ամբողջական տեղեկություն կարելի է ստանալ՝ նշված «QR» կոդերը ներբեռնելով կամ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝ [www.yerevan.am](http://www.yerevan.am) կայքի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» և «Doing Business» բաժիններում տեղադրված համապատասխան ցանկից:

«Օրենսդրությամբ թույլատրվող որոշակի շինարարական աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) ստանալու համար կառուցապատողը պետք է ունենա պետական գրանցում ստացած հողատարածք կամ այլ անշարժ գույք:

Հայտատուի պահանջով և ինժեներական ենթակառուցվածքի փոփոխության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նախագծման թույլտվության հետ միաժամանակ Երևանի քաղաքապետարանը կառուցապատողին անվճար տրամադրում է նաև մատակարար կազմակերպությունների կողմից տրված համապատասխան տեխնիկական պայմանները:

Նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը), շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանից կախված, ունի 1-2 տարվա գործողության ժամկետ, որի ընթացքում կառուցապատողը պետք է պատվիրի ճարտարապետաշինարարական նախագիծ ու դիմի Երևանի քաղաքապետարան՝ այդ նախագծի համաձայնեցման և համապատասխան շինարարության թույլտվություն ստանալու համար:

Շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանից ու բարդությունից կախված՝ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի փորձաքննությունները լինում են տարբեր (մասնավորապես՝ նախագծողի Երաշխավորագիր, Պարզ, Պետական համալիր և Հատուկ համալիր փորձաքննություններ):

Ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցումն ու շինարարության թույլտվության տրամադրումը կատարվում է միաժամանակ՝ կառուցապատողի կողմից ներկայացված մեկ դիմումի հիման վրա:

Կախված նախատեսվող քաղաքաշինական գործընթացի առանձնահատկությունից կամ անշարժ գույքի սեփականատիրոջ հայեցողությունից, մինչև շինարարությունը սկսելը կարող է տրամադրվել առանձին Քանդման թույլտվություն, որի տրամադրման, գործողության ժամկետների ու այլ պահանջների վրա նույնպես տարածվում են շինարարության թույլտվությունների համար սահմանված բոլոր պահանջները:

Ցանկացած շինարարության կամ քանդման թույլտվություն ունի ժամկետ, որը ներառում է շինարարական բոլոր աշխատանքների իրականացման և ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման համար անհրաժեշտ գործընթացի կազմակերպման ժամկետները:

Շինարարական կամ քանդման աշխատանքը սկսելուց առնվազն 3 օր առաջ կառուցապատողը պետք է սահմանված ձևաթղթով Երևանի քաղաքապետարան ներկայացնի համապատասխան տեղեկատվություն, իսկ դրա չներկայացնելը հանդիսանում է հիմք տրված թույլտվության գործողությունը ժամանակավորապես կասեցնելու համար:

Շինարարության կամ Քանդման թույլտվությամբ նախատեսված ժամկետի կեսը լրանալու դեպքում շինարարական աշխատանքները չսկսելը հիմք է տրված թույլտվությունը Երևանի քաղաքապետարանի կողմից ուժը կորցրած ճանաչելու համար, իսկ այն վերսկսելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում սահմանված ընթացակարգով կառուցապատողին կտրամադրվի նոր թույլտվություն:

Շինարարության կամ Քանդման թույլտվությամբ նախատեսված ժամկետում շինարարական աշխատանքները չավարտելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն, այդ թվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքով նախատեսված վարչական տուգանք:



Շինարարության կամ Քանդման թույլտվությամբ նախատեսված ողջ ժամկետում կառուցապատողը պետք է ապահովի շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը և կառուցապատվող օբյեկտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների իրազեկումը՝ ցուցատախտակի միջոցով: Այս պահանջները չպահպանելու դեպքում կառուցապատողները ենթարկվում են պատասխանատվության՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված կարգով:

Եթե նախագծման թույլտվությունը կամ շինարարության թույլտվությունը ստանալուց հետո կառուցապատողն իր հողամասի կամ շինության /այդ թվում՝ անավարտ կառույցի/ նկատմամբ իրավունքները փոխանցում կամ օտարում է այլ անձի, ապա քաղաքաշինական թույլտվություններով սահմանված բոլոր իրավունքների ու պատասխանատվությունների կրողը դառնում է նոր սեփականատերը /կամ օգտագործողը/:

Քաղաքաշինական գործունեության հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

Ճարտարապետաշինարարական նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների ավարտից հետո կառուցապատողը պետք է ձևավորի ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով (որում պետք է ներգրավել նաև Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչին) ու ավարտված օբյեկտն ընդունի շահագործման:

Ընդունող հանձնաժողովի աշխատանքներն ավարտելուց հետո կառուցապատողը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետարան, որի հիման վրա ձևակերպվում է միաժամանակ տրամադրվող Ավարտական ակտ և Շահագործման թույլտվություն:

Նշված փաստաթուղթը ստանալուց հետո անհրաժեշտ է դիմել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային գրասենյակ՝ անշարժ գույքի համապատասխան պետական գրանցում կատարելու համար:

Կառուցապատողի հայեցողության և շինարարության թույլտվությամբ սահմանված հատուկ պայմանի առկայության դեպքում բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի համար կարող են Ավարտական ակտը և Շահագործման թույլտվությունը ձևակերպվել առանձին-առանձին:

Այս իրավունքը հնարավորություն կընձեռի կառուցապատողին նախ՝ Ավարտական ակտի հիմքով ապահովել շենքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն ու կատարել տարածքների օտարման գործարքներ: Դրան զուգահեռ՝ շինարարության թույլտվությունում նշված լրացուցիչ ժամկետում իրականացնել շենքի ինժեներական գծերի մոնտաժման, տեխնոլոգիական սարքավորումների տեղադրման ու ընդհանուր օգտագործման տարածքների հարդարման բոլոր աշխատանքները, որոնց ավարտից հետո Երևանի քաղաքապետարանը կձևակերպի նաև համապատասխան Շահագործման թույլտվությունը:

Ցանկացած քաղաքաշինական փաստաթղթի տրամադրման համար պահանջվող դիմումը և կից փաստաթղթերը Երևանի քաղաքապետարանի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ մուտքագրվելուց հետո համապատասխան թույլտվությունը կամ այլ փաստաթուղթը կտրամադրվի դիմումատուին այդ գործընթացի համար սահմանված ժամկետներում, որոնք հաշվարկվում են օրացուցային օրերով՝ հայտի մուտքագրման օրվանից սկսած:

Ցանկացած քաղաքաշինական փաստաթղթի տրամադրումը կամ ձևակերպումը Երևանի քաղաքապետարանի կողմից ենթակա է մերժման, եթե դիմումատուն լիարժեք չի ներկայացրել ՀՀ օրենսդրության համապատասխան թույլտվության տրամադրման կամ ձևակերպման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Շինարարության կամ Քանդման թույլտվության տրամադրման, Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության ձևակերպման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է որոշակի տեղական տուրքերի ու վճարների գանձում: Դրանց դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշումներով, որոնք կառուցապատողները պետք է վճարեն Երևան համայնքի բյուջե, իսկ այդ վճարումները հավաստող անդորրագրերը կցեն Երևանի քաղաքապետարանի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ մուտքագրվող համապատասխան դիմումներին:



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✓ Կառուցապատման համար անհրաժեշտ թույլտվությունների և այլ փաստաթղթերի ստացման հայտերը կամ դիմումները կարող են ներկայացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ցանկացած «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ, որոնք տեղակայված են Երևանի քաղաքապետարանի թվով երկու և բոլոր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի մասնաշենքերում:

✓ Երևան քաղաքի վարչական տարածքների որոշ գոտիներում ձեղնահարկով երեք հարկանի անհատական բնակելի տների կառուցման կամ վերակառուցման և դրանց օժանդակ կառույցների իրականացման հետ կապված քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրումը (բացառությամբ ավարտական ակտի և շահագործման թույլտվության) Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. N 107-Ն որոշմամբ պատվիրակվել է վարչական շրջանների ղեկավարներին:

Այդպիսի աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվություն ստանալու համար առաջարկվում է համապատասխան հայտերը կամ դիմումները ներկայացնել անմիջապես այդ վարչական շրջանի աշխատակազմի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ, որով դիմումատուին կնպաստի ակնկալվող թույլտվությունն ավելի արագ ստանալու գործընթացին:

### Ծ Ա Ն Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Քաղաքաշինական այն գոտիները, որոնց տարածքում շինարարության թույլտվությունները տրվում են վարչական շրջանների ղեկավարների կողմից, ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների, կարելի է ծանոթանալ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝ [www.yerevan.am](http://www.yerevan.am) կայքի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» բաժնում:



✓ Նախագծման կամ շինարարության թույլտվությունները և Ավարտական ակտերը (Շահագործման թույլտվությունները) էլեկտրոնային եղանակով ստանալու համար կառուցապատողը (հայտատուին) պետք է էլեկտրոնային հայտը կամ դիմումը մուտքագրի Երևանի քաղաքապետարանի՝ «[www.e-permits.am](http://www.e-permits.am)» շինարարության թույլտվությունների ստացման առցանց համակարգի միջոցով, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի կողմից կտրամադրվի համապատասխան փաստաթղթի՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացմամբ տարբերակը:



Մուտք գործել «[www.e-permits.am](http://www.e-permits.am)» համակարգ



Գործընթացը կարգավորվում է  
ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման  
Հավելված N1-ով հաստատված կարգով (68-137-րդ կետեր)

### **Ճարտարապետաշինարարական նախագիծը (այսուհետ՝ Նախագծային փաստաթուղթ)**

Քաղաքաշինական փաստաթուղթ է, որը մշակվում է Երևան համայնքի Գլխավոր հատակագծով և Գոտևորման նախագծերով հաստատված փաստաթղթերին համապատասխան Նախագծման թույլտվությամբ /ճարտարապետահատակագծային առաջադրանքով/ և ՀՀ օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովմամբ: Ընդ որում, Շինարարության /ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման/ թույլտվությունը տրվում է նախապես մշակված նախագծային փաստաթղթերի հիման վրա:

Մշակվում է քաղաքաշինական գործունեության հետևյալ աշխատանքներն իրականացնելու նպատակով

- ✓ բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների (այդ թվում ոչ հիմնական) կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ քանդման կամ ապամոնտաժման), վերականգնման և ուժեղացման,
- ✓ քաղաքաշինական համալիրների և գործառնական տարածքների հատակագծման,
- ✓ բարեկարգման և կանաչապատման:

### **Շինարարության թույլտվությունը**

Փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի ինչպես նոր կառուցապատման նպատակով սահմանված կարգով տրամադրված հողամասում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու կամ ոչ հիմնական շինություն տեղադրելու իրավունքը:

### **Նախագծային փաստաթղթերը մինչև Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցնելը**

1 Կառուցապատողին տրված Նախագծման թույլտվություն /ճարտարապետահատակագծային առաջադրանք/ ստանալու պարագայում անհրաժեշտ Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով համապատասխան լիցենզիա ունեցող նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուի (Նախագծողի) հետ պետք է կնքել նախագծային և հետազոտական աշխատանքների կապալի պայմանագիր:

### **Ծ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Օրենքով սահմանված դեպքերում կամ կառուցապատողի հայեցողությամբ Նախագծողի ընտրությունը կարող է կատարվել նաև ճարտարապետական հրապարակային մրցույթների անցկացման միջոցով:

2 Նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության գործունեության լիցենզիա ունեցող անձի միջոցով այդ փաստաթղթերը ենթարկել համապատասխան փորձաքննության:

#### **Փորձաքննության չեն ենթարկվում.**

■ **II ռիսկայնության աստիճանի (կարեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները,** որոնց նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին հավաստվում է նախագծի հեղինակի կողմից տրվող երաշխավորագրով,



■ **բազմակի օգտագործման օրինակելի նախագծերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սերտիֆիկացված նախագծերի գրոյական նիշից բարձր նախագծային փաստաթղթերը, քանի որ դրանք արդեն իսկ ենթարկված են փորձաքննության:**

**Ծ Ա Ն Ո Ւ Թ Յ ՈՒ Ն**

Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման գործընթացին ու պայմաններին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման Հավելված N2-ով հաստատված կարգից /Հավելված N2/:

3 Նախագծային փաստաթղթերը փորձաքննության ենթարկելուց հետո Կառուցապատողը հաստատում է այն և ստորև նկարագրված քայլերի հաջորդականությամբ ներկայացնում Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» գրասենյակ:

**Ստորև նկարագրված գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է իմանալ**

Բարեկարգման և կանաչապատման նախագծերը մշակվում են ինչպես Նախագծային փաստաթղթերի կազմում՝ որպես դրանց անբաժանելի մաս, այնպես էլ որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ ընդհանուր օգտագործման տարածքների (զբոսայգիներ, հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, լողափեր և այլն), բնության հատուկ պահպանվող տարածքների, պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների և այլ տարածքների լանդշաֆտային կազմակերպման նպատակով:

Նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. N 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:


Նախագծային փաստաթղթերը. կախված նախագծվող օբյեկտի ռիսկայնության աստիճանից (կատեգորիայից) կարող են մշակվել մեկ՝ «Աշխատանքային նախագիծ» կամ երկու՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով՝ այդ թվում.

- ✓ մեկ փուլով մշակվում են II և III ռիսկայնության աստիճանների (կարեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը, ինչպես նաև բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և սերտիֆիկացված նախագծերի փեղակապման նախագծերը,
- ✓ երկու փուլով՝ IV և V կարեգորիաների օբյեկտների նախագծային փաստաթղթերը, ընդ որում՝

1 այդպիսի դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման փուլերը սահմանվում են նախագծման թույլտվությամբ և նախագծային կապալի պայմանագրով,

2 համաձայնեցվող փուլ է համարվում «Նախագիծ» փուլը, որի հիման վրա կարող է տրվել շինարարության (ներառյալ քանդման կամ ապամոնտաժման) թույլտվություն համապատասխան նշումով՝ շինարարական աշխատանքների (մասնավորապես՝ նախապատրաստական, հողային, շինմոնտաժային և այլն աշխատանքների),





**3** Վերջնական «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը մշակվում է նախապես համաձայնեցված «Նախագիծ» փուլի հիման վրա և դրանով ընդունված լուծումներին համապատասխան: Վերջնական փուլում մշակվում են բոլոր տեսակի շինարարական և մոնտաժային աշխատանքների գծագրերն (աշխատանքային գծագրեր)՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. N 128-Ն հրամանով հաստատված կանոններով սահմանված լրիվ կազմով, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին և գործող ստանդարտներին համապատասխան:

Շինարարության թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես սահմանված ընթացակարգով համաձայնեցված ու հաստատված Նախագծային փաստաթղթերի, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Համաձայնեցված Նախագծային փաստաթղթերում, Նախագծման թույլտվությամբ սահմանված պայմանների շրջանակում, թույլատրելի փոփոխությունների կատարումը Երևանի քաղաքապետարանի կողմից ենթակա է քննարկման սույն ուղեցույցով նշված պահանջներով ու ժամկետներում:

### Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվության ստացման համար անհրաժեշտ է

Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» գրասենյակ մուտքագրել ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման N5 հավելվածով հաստատված N2-1 ձևաթղթով լրացված Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության /այդ թվում՝ քանդման և ապամոնտաժման/ թույլտվություն ստանալու դիմում:

Ներբեռնել դիմումի ձևաթուղթը և լրացված դիմումի օրինակելի ձևը



### Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

Կառուցապատողն (դիմումատուն) իր հայեցողությամբ կարող է նաև Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվության ստացման դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ [www.e-permits.am](http://www.e-permits.am) շինարարության թույլտվությունների ստացման առցանց համակարգի միջոցով:

### Դիմումում նշվում և դրան կցվում են

- ✓ Կառուցապատողի կողմից հաստատված Նախագծային փաստաթղթերը (երկու օրինակից):
- ✓ Փորձաքննության դրական եզրակացությունը (կամ եզրակացությունները), իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Նախագծային փաստաթղթերը մշակող կապալառուի գրավոր երաշխավորագիրը:
- ✓ Ֆիզիկական անձի դեպքում՝ սույն դիմումին անհրաժեշտ է կցել դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը), իսկ կառուցապատողի փոխարեն իր օրինական ներկայացուցչի հանդես գալու դեպքում՝ նաև համապատասխան լիազորագիրը:
- ✓ Դիմումի ձևաթղթում ներկայացված այլ տեղեկություններ:
- ✓ Շինարարության թույլտվության (իսկ հաստատված ընթացակարգով նախատեսված դեպքերում՝ նաև քանդման թույլտվության) համար օրենքով սահմանված տեղական տուրքը (կամ տուրքերը) վճարելու մասին անդորրագիրը (կամ անդորրագրերը): Ընդ որում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ տեղական տուրքը վճարելու մասին անդորրագրի (անդորրագրերի) փոխարեն կարող է ներկայացվել նաև պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը:



### Ծ Ա Ն Ո Ւ Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Եթե նոր կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց տվյալ կառուցապատվող հողամասում գտնվող շենքի (շենքերի) և /կամ/ շինության (շինությունների) քանդման, ապա նոր կառուցվող օբյեկտների համար տրամադրված շինարարության թույլտվությունը՝ համապատասխան նշումով, նաև քանդման (կամ ապամոնտաժման) թույլտվություն է, ընդ որում, քանդումը կամ ապամոնտաժումն իրականացվում են սահմանված կարգով՝ համաձայնեցված նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ և կարգով:  
Այսպիսի դեպքերում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքերը վճարվում են միաժամանակ՝ համապատասխան հաշվեհամարներին:
- Շինարարության և Քանդման թույլտվությունների տեղական տուրքերը Երևանում սահմանվում է Երևան քաղաքի ավագանու որոշմամբ:



Ճանդարանայ տեղական տուրքերի սահմանված դրույքաչափերին

### Դիմումի քննարկման ժամկետներն են


<b>II կատեգորիայի օբյեկտների համար՝</b>	
<i>բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակայման դեպքում</i>	<b>3-օրյա ժամկետում</b>
<i>մնացած դեպքերում</i>	<b>5-օրյա ժամկետում</b>
<b>III կատեգորիայի օբյեկտների համար՝</b>	<b>10-օրյա ժամկետում</b>
<b>IV կատեգորիայի օբյեկտների համար՝</b>	<b>15-օրյա ժամկետում</b>

### Ծ Ա Ն Ո Ւ Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հասարակության իրազեկում պահանջող դեպքերում նշված ժամկետներին գումարվում է նաև ՀՀ կառավարության 28.10.1998 թ. N 660 որոշմամբ նախատեսված 15 օր ժամկետը:

### Դիմումը մերժվում է, եթե

- ✓ նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում նախագծման թույլտվությամբ (առաջադրանքով) սահմանված պայմաններին (այդ թվում տեխնիկական պայմաններին) և սահմանափակումներին կամ դրանց կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներին,
- ✓ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը և ձևաթղթում նշված տվյալները պարունակում են ոչ հավաստի կամ ոչ լիարժեք տեղեկություններ կամ լրացուցիչ առաջարկվող 5-օրյա ժամկետում կառուցապատողը չի համալրում /չի ներկայացնում/ թերի ներկայացված կամ բացակայող փաստաթղթերը,
- ✓ նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության (ներառյալ քանդման կամ ապամոնտաժման) թույլտվության տրամադրման մասին դիմումը ներկայացվել է նախագծման թույլտվության (առաջադրանքի) գործողության ժամկետը լրանալուց հետո,
- ✓ չեն ներկայացվել շինարարության և քանդման թույլտվությունների համար օրենքով սահմանված տեղական տուրքերի վճարման անդորրագրերը,
- ✓ նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը չեն համապատասխանում ՀՀ ԿԼ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ N 128-Ն հրամանով հաստատված պահանջներին,
- ✓ դիմումով շինարարության իրականացման համար հայցվող ժամկետը 1.5-ից ավելի անգամ գերազանցում է նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության իրականացման տևողության նորմերով հաշվարկված ժամկետը:



## Կրկնակի դիմումի ներկայացում.

- ✓ Նախագծային փաստաթղթերը որոշակի դիտողություններով հետ է վերադարձվում Կառուցապատողին: Վերջինս ապահովում է դրանց լրամշակումն ու համալրումը և սույն ուղեցույցում նշված ընթացակարգով Նախագծային փաստաթղթերի ու Շինարարության թույլտվության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) տրամադրման կրկնակի դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» գրասենյակ:
- ✓ Եթե բացակայում են կրկնակի դիմումի մերժման հիմքերը, ապա նախագիծը համաձայնեցվում և կառուցապատողին է տրվում Շինարարության թույլտվություն (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման), կրկնակի դիմումի ընդունման օրվանից՝

<b>II կատեգորիայի օբյեկտների համար՝</b>	
<i>բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կամ սերտիֆիկացված նախագծերի տեղակայման դեպքում</i>	<b>3-օրյա ժամկետում</b>
<i>մնացած դեպքերում</i>	<b>5-օրյա ժամկետում</b>
<b>III կատեգորիայի օբյեկտների համար՝</b>	<b>10-օրյա ժամկետում</b>
<b>IV կատեգորիայի օբյեկտների համար՝</b>	<b>15-օրյա ժամկետում</b>

Գործընթացի դրական ելքի արդյունքում Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» գրասենյակից կառուցապատողը ստանում է համաձայնեցված

### ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ

և տրամադրված

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ /ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման/ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

օրինակները

Տրամադրվում է նաև շինարարության վարման մատյան՝ դրոշմակնքված Երևանի քաղաքապետարանի կողմից



## Ծ Ա Ն Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար օրենքով և սույն ուղեցույցով նախատեսված ժամկետներում Երևանի քաղաքապետարանը կառուցապատողին պատշաճ ձևով ծանուցում է Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվության վերաբերյալ որոշման ընդունման մասին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

## Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվության գործողության ժամկետների սկիզբ է համարվում

- ✓ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով շինարարության թույլտվությունն ուժի մեջ մտնելու օրը, որը կառուցապատողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից այն փաստացի ստանալու հաջորդ օրն է:
- ✓ Եթե բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի շինարարության թույլտվությունում առանձին են նշված ավարտական ակտի և շահագործման թույլտվության ձևակերպման ժամկետներն, ապա այդ դեպքում շահագործման թույլտվության ձևակերպման ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում ավարտական ակտի հիմքով կառուցվող (վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, արդիականացվող, ընդլայնվող) շենքի ավարտի պետական գրանցման հաջորդ օրը:



## Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվության գործողության ժամկետները սահմանվում են

### Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար

Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվությամբ սահմանվում է շինարարության ավարտի ժամկետ՝ ըստ կառուցապատողի հայցվող ժամկետի, բայց ոչ ավել քան նախագծային փաստաթղթերում նախատեսված շինարարության իրականացման ժամկետի 1.5-ապատիկը:

### Բազմաբնակարան կամ սպորաբաժանված շենքերի դեպքում

Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվությամբ՝ կառուցապատողի հայեցողությամբ (մասնավորապես շինարարության թույլտվություն տրամադրելու մասին կառուցապատողի դիմումում համապատասխան նշման դեպքում) կարող է սահմանվել.

**ա/** Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության ձևակերպման առանձին ժամկետներ՝ դրանց ձևակերպումները հաստատված ընթացակարգերի պահանջների շրջանակում առանձին-առանձին կազմակերպելու համար

**բ/** Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության ձևակերպման միևնույն ժամկետ, որի արդյունքում կառուցված օբյեկտի ավարտական ակտն ու շահագործման թույլտվությունը, հաստատված ընթացակարգի պահանջների շրջանակում, կձևակերպվեն միաժամանակ՝ մեկ ընդհանուր ակտով:

## Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը նույնպես ներառվում է շինարարության թույլտվության տևողության մեջ, բացառությամբ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտների, որոնց ժամկետը յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

### Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ քանդման), վերականգնման, ուժեղացման և բարեկարգման աշխատանքների համար՝

Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվությունը տրվում է Նախագծային փաստաթղթերով տրվյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տևողության նորմերով հաշվարկված ժամկետով:



### **Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվությունը ստանալուց հետո Կառուցապատողի կողմից իրականացման ենթակա պարտադիր պահանջներ**

Կառուցապատողը պարտավոր է շինարարական աշխատանքների իրականացման ամբողջ ժամանակահատվածում ապահովել Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները՝ շինարարական հրապարակը պատշաճ կազմակերպելու և պահպանելու, ինչպես նաև կառուցապատման վերաբերյալ տեղեկատվական ցուցանակը տեսանելի վայրում մշտապես փակցված պահելու առումներով:

Կառուցապատողը Շինարարական (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ պարտավոր է հաստատված ձևաթղթով (Ձև N2-5) Երևանի քաղաքապետարանի «Մեկ Պատուհան» գրասենյակ մուտքագրել համապատասխան տեղեկանք շինարարական աշխատանքները սկսելու և դրանք իրականացնողների մասին:

Ընդ որում, շինարարության ընթացքում այդ տվյալներում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում դրանց մասին նույն ձևով անհրաժեշտ է իրազեկել Երևանի քաղաքապետարանին 5-օրյա ժամկետում:

Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում Կառուցապատողը պարտավոր է համապատասխան դիմում ներկայացնել Երևանի քաղաքապետարանի «Մեկ Պատուհան» գրասենյակ՝ Շինարարության (ներառյալ Քանդման կամ Ապամոնտաժման) սահմանված ժամկետը երկարաձգելու համար:

### **Շինարարության թույլտվություն չի պահանջվում**

Ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների շինարարական աշխատանքների իրականացման դեպքում, որոնց թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքներ, որոնք կարող են իրականացվել անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից առանց նախագծման և շինարարության թույլտվությունների:

Մատակարար կազմակերպությունների կողմից ենթակառուցվածքների անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման դեպքերում, որոնց ի հայտ գալուց հետո այդ կազմակերպությունները պետք է անհապաղ տեղեկացնեն Երևանի քաղաքապետարանին: Վթարը վերացնելուց բացի մատակարար կազմակերպությունը պարտավոր է լիարժեք վերականգնել մնասված փողոցի, մայթի ասֆալտապատված և/կամ սալիկապատված հատվածը՝ վերացնելով Երևան համայնքին պատճառված վնասը:



## Ի Ր Ա Վ Ա Կ Ա Ն Ա Կ Տ Ե Ր



«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք.



ՀՀ կառավարության 19.03.2015թ. «ՀՀ կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշում.

ՀՀ կառավարության 28.10.1998թ. «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N660 որոշում.



ՀՀ կառավարության 07.06.2012թ. «ՀՀ-ում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կապալոզման ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» N 814-Ն որոշում.

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. N273-Ն հրամանն ուժը կորցնելու մասին» N 128-Ն հրաման.



ՀՀ Երևան քաղաքի ավագանու 26.12.2017թ. «Երևան համայնքում տեղական տնտեսության 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N91-Ն որոշում.

Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշում.



## ՀԱՐԳԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ

Կառուցապարման նպատակով համապատասխան թույլտվություններ և այլ քաղաքաշինական փաստաթղթեր տրամադրելու (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով) գործընթացները կարգավորվում են ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի մարտի 19-ին ընդունված N596-Ն որոշմամբ հաստատված ընթացակարգերով:

Սույն ուղեցույցով ներկայացվում է Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով **ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ մշակելու, հաստատելու ու համաձայնեցնելու և ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ներառյալ ՔԱՆԴՄԱՆ կամ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ տրամադրելու ընթացակարգը (փուլը):**

Ծանոթանալով դրան՝ Դուք կարող եք Երևանի քաղաքապետարանի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ մուտքագրել անհրաժեշտ հայտի (կամ դիմումի) ձևաթուղթը՝ դրան կցելով պահանջվող մյուս փաստաթղթերը: Սույն ուղեցույցից կտեղեկանաք նաև համապատասխան թույլտվության տրամադրման ժամկետներին, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն իրականացնելուն առնչվող մի շարք այլ կարևոր տեղեկությունների:

«ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակում դիմումը (կամ հայտը) մուտքագրելիս Ձեզ կտրամադրվի ծանուցման թերթիկ, որտեղ նշված կլինի մուտքագրված դիմումի քննարկման համար սահմանված ժամկետը և թվային ծածկագիրը (բանալին), որի միջոցով Դուք կարող եք Երևանի քաղաքապետարանի [www.yerevan.am](http://www.yerevan.am) պաշտոնական կայքի «Մեկ պարուհան» բաժնից հետևել դիմումի (կամ հայտի) ընթացքին:

Բոլոր փուլերի դրական ելքի պարագայում «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակից Դուք կստանաք անհրաժեշտ թույլտվություններն ու համաձայնեցված նախագիծը և կկարողանաք իրականացնել համապատասխան շինարարական աշխատանքներ:

**Քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման ամբողջ ընթացակարգին և դրանց տրամադրման համար անհրաժեշտ դիմումներ (կամ հայտեր) լրացնելու ձևաթղթերին վերաբերող ավելի ընդգրկուն տեղեկություններ կարելի է ստանալ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝**

[www.yerevan.am](http://www.yerevan.am)

**կայքի, «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» և «Doing Business» բաժիններում տեղադրված համապատասխան ուղեցույցներից**

